Կ Ա Ր Ծ Ի Ք

Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաներն աշխարհագրության ուսուցման գործընթացում» ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացվել է ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ա.Ս. Մկրտումյանի վերոնշյալ վերնագրով ատենախոսությունը վերաբերում է արդիական հնչեղություն ունեցող կրթական հիմնախնդիրներին՝ պայմանավորված հիմնական դպրոցում հետազոտահեն ուսուցման կազմակերպման անհրաժեշտությամբ, «Աշխարհագրություն» առարկայի դպրոցական դասընթացի ընձեռած հնարավորություններով, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հրամայականով:

Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման հիմնախնդիրն աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի առանցքային հիմնահարցերից է: Այն նոր բովանդակություն է ստացել գիտատեխնիկական հեղափոխության և առաջընթացի արդի պայմաններում, որտեղ մարդու դերը և նրա կողմից իրականացվող հետազոտությունների բնույթը կրել են արմատական որակական փոփոխություններ: Արդի պայմաններում դպրոցից ակնկալվում է աշխարհագրության ժամանակակից նվաճումներին տեղյակ և աշխարհագրական հետազոտության նոր մեթոդները կիրառող սովորողների պատրաստում: Կարևորվում է սովորողների կողմից հետազոտության հարցերի առաջադրումը և աշխարհագրական հիմնախնդիրների արդյունավետ լուծման ուղիների առաջարկումը, աշխարհագրական գիտելիքների գործնական կիրառությունը:

Ատենախոսության **արդիականությունը** հիմնավորված է, նպատակը՝ հստակ ձևակերպված, որոնց համապատասխան առաջադրված են հետազոտության խնդիրներ:

Ատենախոսության գիտական նորույթը հիմնավոր ներկայացված է երեք կետերով, մասնավորապես՝ ատենախոսը վերլուծել է աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման

պայմանները, չափանիշները, հետազոտական գործընթացի փուլերը, մշակել ինքնատիպ հետազոտական առաջադրանքներ, նախագծեր, կազմել գնահատման սանդղակներ, առաջարկել նախագծային, պրոբլեմային, քննադատական մտածողության, մեդիակրթության և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ աշխարհագրության ուսուցման գործընթացում, փորձարկել դրանց արդյունավետությունը:

Կասկած չի հարուցում աշխատանքի **տեսական և գործնական նշանակությունը** մի քանի առումներով. վերլուծվել և համակարգվել են հայ և համաշխարհային մանկավարժ մտածողների գաղափարները կապված հետազոտահեն ուսուցման հետ, հիմնավորվել է հիմնական դպրոցում աշխարհագրության դասերին հետազոտական առաջադրանքների ներդրման անհրաժեշտությունը, մշակվել և տեղայնացվել են հետազոտական կարողությունների զարգացմանը միտված մեթոդական մոտեցումներ, նախագծեր, պրոբլեմային և ուսումնաօժանդակ առաջադրանքներ, ինչպես նաև բուհերում «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» դասընթացի տեսական և գործնական աշխատանքների իրականացում, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում:

Հետազոտության նպատակին և խնդիրներին համապատասխան շարադրված են վարկածը և հիմնավորված դրույթները:

Աշխատանքի փաստացի նյութը, իրականացված փորձարարական և հետազոտական աշխատանքները, ինչպես նաև հրապարակված հոդվածները, կատարվել են պատշաճ մասնագիտական մակարդակով և բարեխղճությամբ: Մասնավորապես՝ ատենախոսի կողմից ատենախոսության վերաբերյալ տպագրվել են 9 գիտական հոդվածներ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, 132 անուն բազմալեզու գրականության ցանկից և 32 հավելվածներից:

Ատենախոսությունը շարադրված 156 էջի վրա, պարզ մասնագիտական լեզվով, զերծ է խրթին և անհասկանալի ձևակերպումներից, հագեցած է անհրաժեշտ

աղյուսակային (14), գրաֆիկական և ցուցադրական նյութերով (21), որոնք լրացնում են տեքստային շարադրանքը և ամբողջացնում աշխատանքը:

Աշխատանքի առանձին գլուխների հակիրճ վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Ատենախոսության **1-ին գլուխը** նվիրված է աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտահետ կարողությունների զարգացման տեսական հիմքերին և մեթոդաբանական նախադրյալներին: Այստեղ արժանին պետք է մատուցել ատենախոսին մեծ թվով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հին ու ժամանակակից մանկավարժական մտքի գրական աղբյուրների բազմակողմանի և թիրախային վերլուծության ու ատենախոսության համատեքստում ներկայացնելու համար:

Գրական տարաբնույթ աշխատանքների հղումների կատարման բարեկրթության և մշակույթի կարևորությունը, որ ատենախոսը կարևորում է ամբողջ աշխատանքում, այստեղ անձնական օրինակով ներկայացված է: Հետազոտահետ ուսուցման արդյունավետության գրավականներից շեշտադրվել է կրթական նպատակների հստակեցումը Բլումի տաքսոնոմիայի՝ Լ.Անդերսենի վերամշակված՝ տարբերակով և ատենախոսի կողմից մշակված հեղինակային աշխարհագրական խնդիրների կիրառմանը: Վերջիններս տեղադրվել են «im.dproc.am» կայքում:

Ատենախոսության 2-րդ գլխում ներկայացված են աշխարհագրության ուսուցման այն մեթոդները, որոնք առավել օգտակար են աշակերտների հետազոտահետ կարողությունների զարգացման համար: Առանցքային ուշադրություն է դարձվել ուսուցման հետազոտական մեթոդին, իսկ պրոբլեմային ուսուցման և մասնակի որոնողական մեթոդներին՝ օժանդակ նշանակություն: Հետազոտահետ ուսուցման համատեքստում ներկայացվել են քննադատական մտածողության, պրոբլեմային ուսուցման, նախագծային գործունեության, տեղեկատվական ուսուցման տեխնոլոգիաները: Բազմակողմանի վերլուծվել և ներկայացվել է հետազոտության գործընթացի քայլաշարը, համադրվել են կիրառվող աշխարհագրական հետազոտական ուսումնական ցիկլերը. Ռոջեր Բայբի ուսումնական ցիկլի մոդել («5E model»), ՄԲ հետազոտության ցիկլի և «ERSI»-ի աշխարհագրական հետազոտական փուլերը:

Գլուխ 3-ում ատենախոսը սահմանում է փորձարարական դասերի անցկացման նպատակները, չափանիշները, ներկայացնում է աշխատանքների կատարման ընթացքը և արդյունքները՝ վերլուծելով մասնակից դպրոցներում (Երևանի «Շիրակացու» ճեմարան միջազգային գիտակրթական համալիր, Երևանի Լ.Միրիջանյանի անվ. թիվ 155 հիմնական դպրոց, Երևանի թիվ 175 միջնակարգ դպրոց, Տավուշի մարզի Դեղձավանի հիմնական դպրոց) հետազոտական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները: Հարցման արդյունքների հիման վրա ատենախոսը մշակել է մեթոդական հանձնարարականներ, առաջադրանքներ, տեխնոլոգիական քարտեր, գնահատման սանդղակներ: Փորձարարության եզրափակիչ փուլում ատենախոսը, ըստ մասնակից դպրոցների՝ փորձարարական դասերի արդյունքները ենթարկել է SWOT վերլուծության:

Հետազոտության արդյունքները ամփոփվել են եզրակացություններում, և ներկայացվել են առաջարկություններ:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը կցանկանայինք նշել նաև որոշ **դիտարկումներ և դիտողություններ**:

1. Քանի որ ատենախոսության տեքստում շատ են կրթական գործընթացի կազմակերպմանն առնչվող բազմաթիվ օտարալեզու եզրույթներն ու հասկացությունները, ինչպես նաև հապավումները, ապա արդյունավետ կլիներ դրանց ներկայացնել առանձին ցանկով ատենախոսության սկզբում:
2. Ատենախոսի կողմից տեղայնացված և մշակված առաջարկությունները, կապված հիմնական դպրոցում աշխարհագրության հետազոտահեն ուսուցման տարրերի զարգացման հետ, առաջացնում է համապատասխան որակներով օժտված ուսուցիչների առկայություն՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող, գոնե բավարար օտար լեզվի իմացությամբ, ժամանակը արդյունավետ տնօրինող, մեդիագրագետ և միջառարկայական մտածելակերպ ունեցող: Նման որակներով ուսուցիչների պատրաստումը ենթադրում է բոմական կրթության մոտեցումների վերանայում և թիրախային ծրագրի իրագործում: Ցանկալի կլիներ առաջարկություններում անդադարձ լիներ այս կարևոր դրույթին:

3. Մյուս կողմից հետազոտահեն աշխատանքների իրականացումը հիմնական դպրոցի միջին դասարաններում առաջացնելու է աշակերտների լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Խնդիրն առավել բարդ է 7-րդ դասարանցիների համար, որոնք զուգահեռ սկսում են մի քանի բազային առարկաների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ինֆորմատիկա և այլն ուսումնասիրություն: Արդեն այլ առարկաների ուսումնական և օժանդակ առաջադրանքներով ծանրաբեռնված աշակերտի համար դժվար կլինի անցում կատարել աշխարհագրական հետազոտահեն ուսուցման, չնայած առաջադրանքների և տեխնիկական միջոցների գրավչությանը և մեդիագործիքների առատությանը:
4. Ատենախոսը բավարար չի վերլուծում և ներկայացնում դասարանում աշակերտների այն օպտիմալ քանակը և անհրաժեշտ ուսումնա-օժանդակ ու տեխնիկական միջոցները և մեդիաաղբյուրները, որոնց պարագայում հնարավոր է արդյունավետ կազմակերպել հետազոտահեն ուսուցման գործընթաց:
5. Աշխատանքում առկա են նաև որոշակի տեխնիկական թերություններ՝ տառասխալներ, եզրույթների և հասկացությունների ոչ հետևողական կիրառումը, օրինակ՝ մի դեպքում տերմին է (էջ 81), մեկ այլ դեպքում՝ եզրույթ (էջ 26): 46, 47, 141 էջերում օգտագործվել է «տրանսդիսցիպլինար», 12 և 139 էջերում՝ «բազմառարկայական» եզրույթները, էջ 50-ում՝ «տրանսֆեր», ապա մեկ այլ դեպքում էջ 79-ում (աղյուսակ 6)՝ «փոխանցում»:

Չնայած նկատված թերություններին և բացթողումներին, կարծում եմ, որ ատենախոսը կատարել է արժեքավոր, տեսական և գործնական կարևոր նշանակություն, գիտական նորույթ ունեցող հսկայական աշխատանք: Մեր պատկերացմամբ այն անկասկած պետք է շարունակվի և հարստացվի նոր բացահայտումներով, ի շահ աշխարհագրության ուսուցման գործընթացի կատարելագործման:

Ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է աշխատանքի բովանդակությունը և ներառում առանցքային դրույթներն ու ցուցադրական նյութերը:

Ե զ ր ա կ ա ց ու թ յ ու ն: Կարծում եմ, որ Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաներն աշխարհագրության ուսուցման գործընթացում» վերնագրով ատենախոսությունը,

աշխատանքի սեղմագիրը, ինչպես նաև հետազոտության թեմայով հրատարակված հոդվածներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտական թվանիշին, իսկ հայցողը միանգամայն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՀՈՎԻԿ Յ. ՍԱՅԱԴՅԱՆ

Գերմանիայի միջազգային համագործակցության Ընկերության (GIZ)

Կայուն հողօգտագործման խորհրդատու

Խորհրդի անդամի (Հ. Յ. Սայադյան) ստորագրության իսկությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության

ինստիտուտի գիտքարտուղար, կ.գ.թ. դոցենտ Ժ. Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

20. 05. 2022 թ.

Подпись
Заверяю
Ученый секретарь Института
ботаники НАН РА